ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 111-Ա

<<21 >> դեկտեմբերի 2023 թվականի քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ /ԲՆԱԿԱՎԱՅՐ ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ/ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ՝ ԳԵՎՈՐԳ ՎԱՉԱԳԱՆԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ, ՆԱԽՇՈՒՆ ԱՐՏՈՒՇԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ, ՀԱՅԿ ԳԵՎՈՐԳԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԵՎ ԶՈՐԻԿ ԳԵՎՈՐԳԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿՍՌՈՒՑՎԱԾ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ /ՊԱՐԻՍՊ/ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 85-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդված 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 2-րդ, 35-րդ, 39-րդ կետերի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 37-րդ կետի 1-ին մասի դրույթներով և հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունն իրականացրած քաղաքացիներ՝ Գևորգ Վաչագանի Հակոբյանը, Նախշուն Արտուշի Հակոբյանը, Հայկ Գևորգի Հակոբյանը և Զորիկ Գևորգի Հակոբյանը, իրենց 2023 թվականի հոկտեմբերի 18-ի համատեղ դիմումով ընդունել են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և Անի համայնքի սեփականությունը համարված **43,68** քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տան, օժանդակ շինության (պարիսպ) և նրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-100-0068-0009 կադաստրային ծածկագրով **0.02612** հեկտար

մակերեսով հողամասի (Վկայական՝ 11082023-08-0027, անշարժ գույքի հասցեն՝ մարզ Շիրակի, Անի համայնք, Սառնաղբյուր բնակավայր 17-րդ փողոց, 22/1 հողամաս) ուղղակի վաճառքով գնման նախապատվության իրավունքը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, տալ համաձայնություն՝ օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված **39.84** քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տունը, **3.84** քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով պարիսպը և նրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-100-0068-0009 կադաստրային ծածկագրով **0.02612** հեկտար մակերեսով հողամասը (Վկայական 11082023-08-0027, անշարժ գույքի հասցեն՝ մարզ Շիրակի, Անի համայնք, գյուղ Սառնաղբյուր 17-րդ փողոց, 22/1 հողամաս) գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով **182 535 (հայրուր ութսուներկու հազար հինգ հայրուր երեսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ** արժեքով վաճառել կառուցապատողին, քաղաքացիներ՝ Գեվորգ Վաչագանի Հակոբյանին, (ID քարտ՝ 007697774, տրված՝ 18.03.2016թ, 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, Սառնաղբյուր բնակավայր 13-րդ փողոց, թիվ 7 բնակելի տուն), Նախշուն Արտուշի Հակոբյանին, (ID քարտ՝ 013526173, տրված՝ 05.04.2022թ, 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, Սառնաղբյուր բնակավայր 13-րդ փողոց, թիվ 7 բնակելի տուն), Հայկ Գեվորգի Հակոբյանին (անձնագիր՝ AL 0243947, տրված՝ 15.05.2023թ, 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, Սառնաղբյուր բնակավայր 17-րդ փողոց 22 բնակելի տուն), Զորիկ Գևորգի Հակոբյանի (անձնագիր՝ AU 0212163, տրված՝ 30.03.2021թ, 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, Սառնաղբյուր բնակավայր 13-րդ փողոց, թիվ 7 բնակելի տուն):

2. Որոշման 1-ին կետով ձևավորված վաճառքի ընդահանուր գնին հավելվում են տվյալ գույքային միավորի նկատմամբ, մինչև օտարումը, համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ վճարման անդորրագրերի հիման վրա:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա. Սարիբեկյանին.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը՝ քաղաքացու միջոցներով:

4. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 26-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասում /բնակավայր Սառնաղբյուր/ քաղաքացիներ՝ Գևորգ Վաչագանի Հակոբյանի, Նախշուն Արտուշի

Հակոբյանի, Հայկ Գևորգի Հակոբյանի և Զորիկ Գևորգի Հակոբյանի կողմից ինքնակամ կառուցված, համայնքի սեփականությունը համարված և օրինական ճանաչված բնակելի տունը, օժանդակ շինությունը /պարիսպ/ և նրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով կառուցապատողին օտարելու համար համաձայնություն տալու մասին>> N 85-Ա որոշումը:

5. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ-11	Դեմ – 0	Ձեռնպահ –0
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ	----------	----------	----------
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ	----------	----------	----------
Ա. ՇԱԲՈՅԱՆ	----------	----------	----------
Հ. ՋԱՏԻԿՅԱՆ	----------	----------	----------
Ժ. ԱԼԵՔՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Ն. ՍԱՐՈՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ	----------	----------	----------
Մ. ԵՆՈՔՅԱՆ	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<21>> դեկտեմբերի 2023 թ.
քաղաք Մարալիկ